«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2015 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս.Վ.Խաչիկյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական, գիտական, կազմակերպական, մեթոդական, կրթության որակի ապահովման ու հասարակական բնույթի մեծ աշխատանքներ, որոնք ապահովել են մասնաճյուղի բնականոն գործունեությունը և նպաստել ուսումնագիտական համակարգի զարգացմանը:

Ուսումնական գործընթացը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպվել է «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում»), «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ «Գործարար կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտություններով՝ ՀՊՏՀ-ում կիրառվող չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան: Բոլոր ստուգարքներն ու քննությունները առկա ուսուցման համակարգում անցկացվում են թեստային, բանավոր, թեստային-գրավոր, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ բանավոր ձևերով: Ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվում են մայր բուհում. հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղն ավարտել են մագիստրոսի կրթական ծրագրի առաջին 28 շրջանավարտները:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղի գործունեության մեջ առանձնացել են հետազոտական աշխատանքների իրականացումը, ենթակառուցվածքների (դահլիճ, ջեռուցման համակարգ) ստեղծման նպատակով աշխատանքների կազմակերպումը, ուսումնական գործընթացի մեթոդական և կազմակերպական աշխատանքների կատարելագործումը, մայր բուհի տարբեր ստորաբաժանումների հետ համագործակցության ընդլայնումը, ուսանողական խորհրդի հետ աշխատանքների ակտիվացումը: Դրանց արդյունքում բարելավվել են մասնաճյուղի ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպական, գիտական, հետազոտական, կրթության որակի ապահովման գործընթացները, կարգավորվել են մի շարք ենթակառուցվածքների աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում առաջին անգամ մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական կազմի նախաձեռնությամբ՝ «Կրթության որակի բարելավման ազդեցությունը նորարարական տնտեսության զարգացման վրա» թեմայի շրջանակում, իրականացվել է «Տարածքային տնտեսության վրա բուհի ազդեցության գնահատման տեսամեթոդական մոտեցումները» հետազոտական աշխատանքը, որում ընդրգկված են եղել նաև մայր բուհի և Գյումրու մասնաճյուղի դասախոսներ

(խմբի ղեկավար Պ.Քալանթարյանը և Ս.Խաչիկյանը հետազոտությանը մասնակցել են հասարակական հիմունքներով): Հետազոտական աշխատանքը հրատարակության է ներկայացվել որպես կոլեկտիվ մենագրություն:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում տրամադրվել են ուսման վարձի զեղչեր, այլ կազմակերպություններից մրցութային հիմունքներով հատկացվել են կրթաթոշակներ և ուսանողական նպաստներ, որոնք ընդգրկել են վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների մոտ 30%-ին:

Ընդհանուր առմամբ, մասնաճյուղի ուսումնական, կազմակերպական, գիտական և վարչատնտեսական գործընթացներն իրականացվել են ՀՊՏՀ կրթական և ուսումնական ծրագրերին, սահմանված ընթացակարգերին ու կանոնակարգերին համապատասխան:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. **Մասնաճյուղի 2014-2015 ուսումնական տարվա ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) ընդլայնել աշխատանքները ՀՊՏՀ ֆակուլտետների, ամբիոնների և այլ ստորաբաժանումների հետ՝ ուսումնական, մեթոդական, կազմակերպական ու գիտական գործընթացների ավելի մեծ արդյունավետություն ապահովելու նպատակով,
   2) իրականացնել աշխատանքներ ուսումնագիտական գործընթացներում դասախոսների և ուսանողների ներգրավվածության աստիճանը մեծացնելու, այդ աշխատանքներում հետազոտական մոտեցումներն ընդլայնելու ուղղությամբ՝ կրթության որակի բարձրացման նպատակով,
   3) նպաստել ուսանողների և դասախոսների կողմից իրականացվող ուսումնագիտական նախաձեռնություններին, որոնք կմեծացնեն մասնաճյուղի գործունեության թափանցիկությունն ու հանրայնացումը:

3. **Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի տնօրինության նիստում և իրականացնել միջոցառումներ նշված հանձնարարականները կենսագործելու ուղղությամբ:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

01.04.2015 թ.